ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	թիվ 6	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Չի հրապարակվել	*Ընդունման վայրը*	Սոչի
Ընդունող մարմինը	Եվրասիական միջկառավարական խորհուրդ	*Ընդունման ամսաթիվը*	12.08.2016
Ստորագրող մարմինը	Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներ	*Ստորագրման ամսաթիվը*	12.08.2016
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը		*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԸ ՀՍԿԻՉ (ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ) ՆՇԱՆՆԵՐՈՎ ԴՐՈՇՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԵԽԱՆԻԶՄՆ ԻՐԱԳՈՐԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 օգոստոսի 2016 թվականի **թիվ 6** քաղ. Սոչի

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԸ ՀՍԿԻՉ (ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ) ՆՇԱՆՆԵՐՈՎ ԴՐՈՇՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԵԽԱՆԻԶՄՆ ԻՐԱԳՈՐԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

««Ապրանքներն ըստ «Հագուստի առարկաներ, հագուստի պարագաներ եւ այլ արտադրատեսակներ բնական մորթուց» ապրանքային դիրքի հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման ներմուծմանն ուղղված պիլոտային ծրագիրը 2015-2016 թվականներին իրագործելու վերաբերյալ» 2015 թվականի սեպտեմբերի 8–ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) կիրառման նպատակներով՝ Եվրասիական միջկառավարական խորհուրդը որոշեց.

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովին՝ մինչեւ 2016 թվականի սեպտեմբերի 1–ը Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կառավարությունների հետ համատեղ մշակել առաջարկներ 2017 թվականի եւ հաջորդող տարիների համար Համաձայնագրի այն իրավաբանական նորմերի ամրագրման վերաբերյալ, որոնք կապված են այն ապրանքների շրջանառության հետ, որոնց նկատմամբ հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորելու մասին որոշում է ընդունվել:

2. Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կառավարություններին եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովին՝ ստացված առաջարկների արդյունքներով անցկացնել համատեղ խորհրդակցություններ եւ զեկուցել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի առաջիկա նիստին:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից:

Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ղրղզստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**